

# ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի ուղերձը Հայաստանի Հանրապետության օրվա 100-րդ տարեդարձի կապակցությամբ

25.05.2018



Մի րեւի հայրենակիցներ:

Մրտանց շնորհավորում եմ բոլորիս Մայիսի 28-ի` Հայաստանի առաջին Հանրապետության օրվա 100-րդ տարեդարձի կապակցությամբ:

1918 թվականին կազմավորվեց Հայաստանի առաջին Հանրապետությունը, որ ձեռք բերվեց Սարդարապատում, Բաշ-Ապարանում և Ղարաքիլիսայում մեր ժողովրդի մղված անհավասար, բայց և հաղթական պայքարով:

Մեր ժողովրդի պատմությունը թեև եղել է անկումներով նաև, այնուամենայնիվ պատմությունն արձանագրել է մի շարք հերոսական վերելքներ, որոնցից մեկը ուղիղ մեկ դար առաջ 1918 թվականի հերոսամարտի արդյունքում ձեռք բերված Հայոց պետականությունն է` պետականության շուրջ հինգուկեսդարյա կորստից հետո:

Հայաստանի առաջին Հանրապետության գոյատևման երկուսուկես տարիների ընթացքում ստեղծված պետական կառույցը հիմք հանդիսացավ նախ Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության, իսկ այնուհետ` Հայաստանի Հանրապետության:

1918-1920թթ. Հայաստանի առաջին Հանրապետության գոյությունը մեր ժողովրդի հայրենասիրության, անկախ ապրելու որոշմանը տեր լինելու պատմական վկայություն է: Փառք ու պատիվ մաղթենք հերոսամարտի բոլոր նահատակներին, ովքեր կենաց ու մահվան կռիվ տվեցին հանուն մեր հայրենիքի անկախության: Ու մեզ ավանդեցին այս փոքրիկ երկիրը, որի գորացումն ու հզորացումն այսօր ապրողներիս գործն է նաև, որպես պատասխան նրանց թափած արյան և որպես իրականացումը` նրանց կիսատ մնացած երազանքների :

Բարի հիշատակ 1918-1920թթ. ազատամարտի հերոսներին, Հայոց վերածնված պետականության համար մարտիրոսված մեր քույր-եղբայրերին:

Կրկին շնորհավորում եմ Հայաստանի առաջին Հանրապետության 100-րդ տարեդարձի կապակցությամբ: Մաղթում եմ բոլորիս խաղաղ օրեր և ամուր պետականություն:

Կեցցե՛, Հայաստանի Հանրապետությունը: Կեցցե՛, հայ ժողովուրդը:

Աստված պահապան մեր երկրին: